ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«____» _____ 2020 թվական N _____-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի մայիսի 26-ի ՆՀ-3-Ն հրամանագրի 2-րդ կետը և «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ և 9-րդ հոդվածի 1-ին մասերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել՝

1) Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի _____ _____-ի N_____-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե) հանրապետական գործադիր մարմին է, որն ապահովում է Արցախի Հանրապետության կառավարության քաղաքականության՝ օրենքով իրեն վերապահված առանձին ուղղության իրականացումը, ինչպես նաև աջակցում է իրեն վերապահված ուղղության շրջանակներում Արցախի Հանրապետության կառավարության քաղաքականության մշակմանը:

2. Կոմիտեն ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

3. Կոմիտեն գործում է Արցախի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

4. Կոմիտեի լրիվ անվանումն է՝

1) հայերեն՝ Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե.

2) ռուսերեն՝ Комитет государственных доходов Республики Арцах.

3) անգլերեն՝ State Revenue Committee of the Artsakh Republic:

5. Կոմիտեն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն, անգլերեն ու ռուսերեն անվանմամբ կլոր կնիք և ձևաթղթեր: Կոմիտեն կարող է ունենալ խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Կոմիտեի կառուցվածքում ընդգրկվում են կոմիտեի նախագահի, կոմիտեի նախագահի տեղակալի, կոմիտեի նախագահի խորհրդականի, կոմիտեի նախագահի մամուլի քարտուղարի, կոմիտեի նախագահի օգնականի, աշխատակազմի ղեկավարի, աշխատակազմի ղեկավարի տեղակալի պաշտոնները և կառուցվածքային ստորաբաժանումները: Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ կոմիտեի ենթակայությանը կարող են հանձնվել պետական ոչ առևտրային կազմակերպություններ:

7. Կոմիտեի աշխատողներն իրենց զբաղեցրած պաշտոններին համապատասխան կարող են լինել հայեցողական, հարկային, քաղաքացիական ծառայությունների պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք:

8. Կոմիտեին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է վերապահվել պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

9. Կոմիտեն իրավապահ մարմին է:

10. Կոմիտեի գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Տիգրան Մեծի 16:

2. ԿՈՄԻՏԵԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

11. Կոմիտեի նպատակներն են՝

1) «Հարկային ծառայության մասին» օրենքով սահմանված խնդիրների լուծումը, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների ապահովումը և Արցախի Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովմանը նպաստումը.

2) կոմիտեին օրենքով վերապահված լիազորությունների իրականացումը:

12. Կոմիտեի խնդիրներն են՝

1) Արցախի Հանրապետության հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների կատարման ու կիրառման նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացումը.

2) պետական հարկերի և վճարների վճարման նկատմամբ հսկողության իրականացումը.

3) Արցախի Հանրապետության հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտումների կանխումը, խափանումը, այդ խախտումների բացահայտումը.

4) Արցախի Հանրապետության հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված պարտավորությունների չկատարման հետևանքով Արցախի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ առաջացած պարտավորությունների մարման գծով աշխատանքների իրականացումը.

5) Արցախի Հանրապետության հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված չկատարված պարտավորությունների ապահովումը և գանձումը.

6) հարկային հարցերին առնչվող միջազգային պայմանագրերով Արցախի Հանրապետության պարտավորությունների կատարումը և իրավունքների իրականացումը, օտարերկրյա պետությունների հարկային, մաքսային ու այլ իրավասու մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը.

7) Արցախի Հանրապետության հարկային եկամուտների հաշվառումը, վիճակագրության վարումը.

8) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ հսկողության իրականացումը.

9) Արցախի Հանրապետության սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման նկատմամբ հսկողության իրականացումը.

10) իր իրավասության սահմաններում իրեն վերապահված ուղղության շրջանակներում Արցախի Հանրապետության կառավարության քաղաքականության մշակմանն աջակցելը.

11) կոմիտեին օրենքով վերապահված այլ խնդիրների իրականացումը:

3. ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

13. Կոմիտեի գործառույթներն են՝

1) հարկ վճարողների կամ հարկային գործակալների՝ Արցախի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված պարտականությունների ընկալմանը և

կամավոր կատարման ապահովմանն ուղղված հարկ վճարողների սպասարկումը և իրազեկումը.

2) հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի մասին հանրային իրազեկումը.

3) հարկային հաշվարկների և Արցախի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթերի ընդունման և (կամ) տրամադրման, ինչպես նաև հարկ վճարողների համար գրանցումների, հաշվառումների, հաստատումների, վավերացումների և այլ գործընթացների իրականացումը.

4) հարկ վճարողների հաշվառումը.

5) պետական հարկերի և վճարների հավաքագրման կազմակերպումը.

6) հարկ վճարողների նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացումը.

7) Արցախի Հանրապետության հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված չկատարված պարտավորությունների գանձման, ինչպես նաև պարտավորությունների ապահովման նպատակով արգելադրման աշխատանքների իրականացումը.

8) Արցախի Հանրապետության հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումը.

9) կոմիտեի ընդունած անհատական իրավական ակտերի, հարկային ծառայողների գործողությունների կամ անգործության վերաբերյալ վեճերի լուծման նպատակով ներկայացված բողոքների քննարկումը և որոշումների ընդունումը.

10) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների հաշվառումը.

11) հարկային քաղաքականության մշակմանը մասնակցությունը.

12) հարկ վճարողի գործարքների մոնիթորինգի, գործունեության այլ ոլորտային վերլուծությունների և դրանց արդյունքներով գնահատված ռիսկերի նվազեցման վերաբերյալ ծանուցագրերի միջոցով հարկ վճարողներին իրազեկման իրականացումը.

13) քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով իրեն վերապահված գործերով հետաքննության իրականացումը.

14) վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքին համապատասխան՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ իրեն վերապահված գործերով վարույթի իրականացումը.

15) հարկային իրավախախտումների բացահայտման ուղղությամբ անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը՝ օրենքով սահմանված կարգով.

16) Արցախի Հանրապետության հարկային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով հարկային մարմնի կողմից հարկ վճարողների մոտ օրենքով սահմանված կարգով ստուգումների, ուսումնասիրությունների և օրենքով նախատեսված այլ հսկողական գործողությունների իրականացումը.

17) հարկային վարչարարության և ընթացակարգերի մեթոդական ապահովումը.

18) հարկային բնագավառում տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց առնչվող համակարգերի կառավարումը՝ մշակումը, ներդնումը և սպասարկումը.

19) կոմիտեի աշխատողների ուսուցման և վերապատրաստման կազմակերպումը, ատեստավորումը.

20) հարկային վարչարարության իրականացման բնագավառում միջազգային համագործակցության ապահովումը.

21) հարկային ոլորտում միջազգային պայմանագրերի շրջանակներում օտարերկրյա իրավասու մարմինների հետ տեղեկատվության փոխանակումը (ըստ դիմում-պահանջի, ինքնաբերական և ավտոմատ եղանակով).

22) կոմիտեի իրավասության սահմաններում՝ ֆիզիկական անձանց և կազմակերպությունների կողմից Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկերի և վճարների հաշվարկման, գանձման և ժամանակին Արցախի Հանրապետության պետական բյուջե փոխանցման նկատմամբ հսկողության իրականացումը.

23) հարկային հարցերին առնչվող միջազգային պայմանագրերով Արցախի Հանրապետության պարտավորությունների կատարումը և իրավունքների իրացումը, օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ հանդիպումների ու քննարկումների կազմակերպումը, համատեղ համաձայնագրերի, պայմանագրերի, հուշագրերի և այլ նախագծերի պատրաստումը.

24) Արցախի Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման նպատակով, օրենքով սահմանված իրավասության սահմաններում, համապատասխան միջոցառումների իրականացումը.

25) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության նկատմամբ հսկողության իրականացումը.

26) Արցախի Հանրապետության սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման նկատմամբ հսկողության ապահովումը.

27) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացումը.

28) քաղաքացիական պաշտպանության և զորահավաքային նախապատրաստության ոլորտներում պլանների ու ծրագրերի մշակումը, հիմնական միջոցառումների իրականացումը, համակարգի աշխատողների պաշտպանության և զորահավաքային ռեսուրսների հաշվառման, ինչպես նաև համակարգի կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը:

4. ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

14. Կոմիտեի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Արցախի Հանրապետության նախագահը:

15. Արցախի Հանրապետության կառավարությունը՝

1) հաստատում է կոմիտեի կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը և կատարում կանոնադրության փոփոխություններ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

2) սահմանում է կոմիտեի աշխատողների առավելագույն թվաքանակը.

3) օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ սահմանում է կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները.

4) հաստատում է կոմիտեի գործունեության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը:

16. Կոմիտեն կառավարում է կոմիտեի նախագահը:

17. Կոմիտեի նախագահը հաշվետու է Արցախի Հանրապետության Նախագահին:

18. Կոմիտեի նախագահը՝

1) պատասխանատու է կոմիտեի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

2) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից, ինչպես նաև տալիս է Արցախի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

3) իրականացնում է կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կառավարումը.

4) հանձնարարականներ և ցուցումներ է տալիս կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակա կազմակերպությունների ղեկավարներին, կոմիտեի նախագահի տեղակալին և աշխատակազմի ղեկավարին.

5) նշանակում և ազատում է իր խորհրդականին, մամուլի քարտուղարին, օգնականին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) օրենքով կամ կոմիտեի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է կոմիտեի՝ օրենքով նախատեսված համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

7) հաստատում է հաստիքացուցակը.

8) հաստատում է ներքին կարգապահական կանոնները.

9) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստեղծում է իրեն կից խորհրդակցական մարմիններ, աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ.

10) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում աշխատակազմի ղեկավարի՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները.

11) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում իր տեղակալի, աշխատակազմի ղեկավարի հանձնարարականները.

12) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների ղեկավարների՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները, ցուցումները, հանձնարարականները.

13) լսում է կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

14) վերահսկողություն է իրականացնում կոմիտեին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

15) սահմանում է կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները՝ հաստատելով դրանց կանոնադրությունները և ներքին կառուցվածքը.

16) տրամադրում է արձակուրդ կոմիտեի աշխատակազմի ղեկավարին՝ Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը և դրանով սահմանված կարգին համապատասխան.

17) կատարում է պարտականությունների բաշխում իր խորհրդականի և օգնականի միջև.

18) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ.

19) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

19. Կոմիտեի նախագահի բացակայության դեպքում կոմիտեի նախագահի հրամանով նրան փոխարինում է առաջին տեղակալը, իսկ առաջին տեղակալի բացակայության դեպքում՝ կոմիտեում կոմիտեի նախագահի տեղակալի առավել երկար ստաժ ունեցող տեղակալը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

20. Կոմիտեի նախագահի տեղակալը՝

1) գործում է կոմիտեի նախագահից պատվիրակված լիազորությունների ուժով և համակարգում է աշխատանքները (գործունեությունը) իրեն հանձնարարված բնագավառներում.

2) իր համակարգման լիազորությունների շրջանակներում կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին, ենթակայությանը հանձնված կազմակերպություններին փոխանցում է կոմիտեի նախագահի հանձնարարականները, ապահովում կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կողմից կոմիտեի նախագահի հանձնարարականների կատարումը, իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով կոմիտեի նախագահին.

3) իր համակարգման լիազորությունների շրջանակներում ստանում է աշխատակազմի ղեկավարի աջակցությունը, համագործակցում է այլ մարմինների և կազմակերպությունների հետ.

4) իր համակարգման լիազորությունների շրջանակներում կոմիտեի նախագահին ներկայացնում է առաջարկություններ.

5) իրականացնում է կոմիտեի նախագահի կողմից տրված ցուցումները և հանձնարարականները:

21. Կոմիտեն գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ ձեռք է բերում և իրականացնում աշխատակազմի ղեկավարի միջոցով:

22. Աշխատակազմի ղեկավարը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատու է կոմիտեի լիազորությունների իրականացման կազմակերպական, անձնակազմի կառավարման, ֆինանսատնտեսական գործառույթների իրականացման և քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցության համար:

23. Աշխատակազմի ղեկավարին անմիջական հաշվետու են աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները:

24. Աշխատակազմի ղեկավարը ՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, կնքում է գործարքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով տալիս է լիազորագրեր.

2) օրենքով, այլ իրավական ակտերով և կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կոմիտեին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) օրենքով նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է կոմիտեի՝ օրենքով նախատեսված համապատասխան աշխատողներին, այդ թվում՝ քաղաքացիական աշխատանք կատարողներին և տեխնիկական սպասարկում իրականացնողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

4) կոմիտեի նախագահին է ներկայացնում կոմիտեի տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ համակարգում և ապահովում է կոմիտեի հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվությունների կազմումը.

5) կոմիտեի նախագահին է ներկայացնում առաջարկություններ կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպական հարցերի վերաբերյալ.

6) կոմիտեի նախագահին է ներկայացնում աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության հաշվետվությունները և մյուս ստորաբաժանումների մասով՝ իր իրավասության շրջանակներին վերաբերող տեղեկատվություն, իսկ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հաշվետվություն.

7) իր համակարգման լիազորությունների շրջանակներում համագործակցում է կոմիտեի նախագահի տեղակալի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների հետ.

8) իր համակարգման լիազորությունների շրջանակներում կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին, ենթակա կազմակերպություններին փոխանցում է կոմիտեի նախագահի հանձնարարականները կամ իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով կոմիտեի նախագահին.

9) անհրաժեշտության դեպքում կնքում է կառուցվածքային ստորաբաժանումների պատրաստած, ինչպես նաև իր և (կամ) կոմիտեի նախագահի և (կամ) կոմիտեի նախագահի տեղակալի անունից պատրաստված փաստաթղթերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

10) աշխատակազմի ղեկավարը կարող է ունենալ տեղակալ, որը փոխարինում է նրան բացակայության ժամանակ: Աշխատակազմի ղեկավարը իր տեղակալի անմիջական ղեկավարն է: Աշխատակազմի ղեկավարի տեղակալն անմիջական հաշվետու է աշխատակազմի ղեկավարին:

25. Կոմիտեի նախագահի խորհրդականը՝

1) առանձին դեպքերում կատարում է կոմիտեի նախագահի հրամանով վերապահված կոմիտեի նախագահի լիազորությունների իրականացմանն աջակցման որոշակի աշխատանքների, ծրագրերի համակարգում.

2) իր կողմից համապատասխան աշխատանքների իրականացման շրջանակներում կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներից, ենթակայությանը հանձնված կազմակերպություններից ստանում է տվյալ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն:

26. Կոմիտեի նախագահի մամուլի քարտուղարը՝

1) իրականացնում է կոմիտեի նախագահի հրամանով վերապահված գործառույթներ, այդ թվում՝ պետական մարմնի ղեկավարի, այլ պաշտոնատար անձանց ու զանգվածային լրատվության միջոցների միջև համագործակցության ապահովում, հայտարարությունների, հարցազրույցների, մամուլի ասուլիսների, ճեպազրույցների կազմակերպում և անցկացում, պետական մարմնի աշխատանքների մասին տեղեկատվություն տրամադրելու նպատակով զանգվածային լրատվության միջոցների և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ աշխատանքային հանդիպումների լուսաբանում.

2) կոմիտեի նախագահի հրամանով վերապահված գործառույթների իրականացման նպատակով համագործակցում է պետական մարմնի ղեկավարի օգնականների, խորհրդականների, տեղակալների, ինչպես նաև պետական մարմնի այլ ստորաբաժանումների աշխատակիցների հետ, ստանում է նրանցից առաջիկա ամսվա նրանց աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև նախատեսվող միջոցառումների ցանկը:

27. Կոմիտեի նախագահի օգնականը՝

1) առանձին դեպքերում կատարում է կոմիտեի նախագահի հրամանով վերապահված կոմիտեի նախագահի լիազորությունների իրականացմանն աջակցման որոշակի աշխատանքներ.

2) իր կողմից համապատասխան աշխատանքների իրականացման շրջանակներում կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներից, ենթակայությանը հանձնված կազմակերպություններից ստանում է տվյալ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն:

5. ԿՈՄԻՏԵԻ ԳՈՒՅՔԸ

28. Կոմիտեն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

29. Կոմիտեի գույքը ձևավորվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ կոմիտեի տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից:

30. Կոմիտեին հանձնվող գույքի կազմը և չափը որոշում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

31. Կոմիտեն տիրապետում, օգտագործում, իսկ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում նաև տնօրինում է իրեն հանձնված գույքը:

6. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

32. Կոմիտեն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ ներկայացնում ֆինանսական, հարկային, պարտադիր վճարների ու վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

33. Կոմիտեի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել վերստուգման (աուդիտի)՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

7. ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

34. Կոմիտեի աշխատակազմի վերակազմակերպման և դրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**